ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԱՐՏԱԾԱՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼ

Արտաշատի հնագիտական արշավախումբը 2010 թ. հուլիս-սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին շարունակեց Արաքսից շուրջ 70մ հեռավորությամբ գտնվող բլրի հեթանոսական տաճարի «զանձարան» եւ հասարակական բաղնիքի հարավային հատվածում: Անձրեւների եւ Արաքսի հորդանալու, ափերից դուրս գալու պատճառով պեղավայրը վերստին լցվել էր ջրով: (աղ. I,$_1$) Աշխատանքները տարվել են մի կողմից հա-սարակական բաղնիքի արեւմտյան կողմում գտնվող մեծ սենյակում՝ «Գանձարան» (ներքուստ 10x12մ, արտաքուստ 16,60x12,40մմ, պատի լայն. 2-2,05մ), եւ, միաժամանակ նախորդ տարիներին բացված շինություններն ու տարածքը տիղմի նստվածքից (15-20սմ) մաքրելով:

«Գանձարանի» ներքուստ 3-3,50սմ խորանալուց, ստերիլ հողը հեռացնելուց հետո, ի հայտ եկան հին շինության սենյակների որմերը, (աղ. I,$_2$), որոնք ջարդած մանր քարերով, կավե շաղախի օգնությամբ, կանոնավոր շարված պատեր են (երկ. 1,12մ, լայն. 1մ, բարձր. 50սմ): «Գանձարանի» արտաքուստ բացված արեւելյան, հարավային, արեւմտյան պատերն օժտված են ստիլոբատով: Այդ պատերը եւ հատկապես դրանց անկյունները շարված են կրաքարով եւ տուֆով, մակերեսը՝ հարթ, լավ մշակված խոշոր զանգվածեղ քարերով (երկ. 1-1,60մ, բարձր. 50սմ): Քանդված շինությունը վերականգնելիս թափված քարերը երբեմն շարվել են այնպես, որ քարերի հարթ մակերեսը մնացել է պատի մեջ:

Արեւմտյան պատի շարվածքում օգտագործվել են նույնիսկ տաճարի հոնիական խոյակները եւ կանելյուրներով գլանները (աղ. I,$_3$)[1]:

«Գանձարանի» հարավային պատի ներսի եւ դրսի կողմի քարերից երկուսի անհարթ մակերեսին դրոշմված են հունարեն տառերով արձանագրություններ (աղ. I,$_4$, a,b): Երկու արձանագրություն էլ առկա են ստիլոբատի քարերի վրա (աղ. II,$_5$, a,b): Պատերի շարվածքի միջի տուֆի եւ կրաքարի երեսին փորագրված են հունարեն H եւ HN գրերը (աղ. II,$_6$, a,b): Հունարեն բառերն ընթեռնելի չեն: Գրերը թեեւ հունատառ են, սակայն հունարեն բառեր չեն: Ակներեւաբար դրանք այլ էթնիկ պատկանելություն ունեցողների թողած անուններ են:

«Գանձարանի» հյուսիսարեւմտյան անկյունում բացվել է մուտքը (լայն. 1մ), որը միջնադարում փակվել է: Ըստ երեւույթին շինության ներքին կեսը լցված է եղել եւ չի օգտագործվել: Երկու մետր խորանալուց հետո հայտնաբերվել է «Գանձարանի» հյուսիսային պատը: Վերջինիս ցոկոլի երկու շարքերը կառուցապատվել են բազալտե զանգվածեղ քարերով.

1 **Ժորես Խաչատրյան,** Նորահայտ հեթանոսական տաճար Արտաշատ մայրաքաղաքում. «Բանբեր Երեւանի համալսարանի», Հայագիտություն, Եր., 2010, 130, 1, էջ 29-41:



Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4a

Նկ. 4b

Նկ. 5a

Նկ. 5b

Նկ. 6a

Նկ. 6b

Նկ. 7a

Նկ. 7b

վերջիններիս վրա կրաքարերի շարքն է, ռուստիկ մշակումով եւ ծիծեռնակապոչ կապերի ակոսներով (աղ. II,$_{7}$, a,b): Պատը կառուցված է ճիշտ այնպես (աղ. V,$_{22}$), ինչպես երկրորդ հարթակի որմը (մ.թ. 60-ական թվականներ): Պատը ժայռերի վրայով աստիճանաձեւ բարձրանալով, դեպի արեւմուտք ձգվելով միանում է տաճարի արեւելյան հիմնախարսխի (սրիլոբատի) հարավային եզրի կրաքարե ծիծեռնակապոչ փոսիկներ ունեցող պատին: Պարզ է դառնում, որ այն եղել է երկրորդ հարթակի, սրբազան հրապարակի հարավային պատը, որն ավերվել է քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո տաճարի հետ միաժամանակ:

«Գանձարանի» արեւմտյան պատին զուգահեռ կառուցված որմը թեքվում է դեպի արեւմուտք: Այն փաստորեն պարսպի դեր է կատարել: Ներսում լցված ջարդոտված մանր քարերը լուծեցին տաճարի այս հատվածում խճի առկայության հարցը: «Գանձարանի» արեւմտյան պատի եւ զուգահեռ պատի միջեւ եղած միջանցքի (լայն. 155-205սմ) ժայռերը աստիճանաձեւ բարձր կտրված են: «Գանձարանի» մուտքի (աղ. III,$_{8}$) առջեւ ցածր է 25սմ. հյուսիսային պատից՝ 40սմ: Ժայռը հորիզոնական 125սմ դեպի հարավ շարունակվելուց հետո, կտրված է ուղղահայաց (բարձր. 70սմ), այնուհետեւ հորիզոնական 310սմ առաջանալով կրկին ուղղահայաց ընդհատվում է (բարձր. 72սմ): Միջանցքի արեւմտյան կողմի կառույցը, որը խոշոր անմշակ բազալտից է, օժտված է նույն բարձրությամբ, ինչպես «Գանձարանի» պատը: Այն դեպի հարավ 13,70մ ընթանալով (բարձր. 4-4,50մ) թեքվում է արեւմուտք (դեպի Արաքս), որը դեռեւս բացված չէ: Միջանցքից հայտնաբերվել են որմնանկարների գեղեցիկ բեկորներ, հելլենիստական խեցեղենի փակ անոթների, տարբեր հաստության կղմինդրների մասեր, կրաշաղախե կանելյուրներով փոքր կիսասյան (որմնանյութի) մի հատված (տր. 14սմ, աղ. IV,$_{17}$):

«Գանձարանի» եւ հասարակական բաղնիքի հարավային կողմում, արեւմուտք-արեւելք ամբողջ երկայնքով բացված մ.թ. առաջին դարին պատկանող լայն պատի (լայն. 155-170սմ) եւ դրանից հարավ, մ.թ.ա. Բ-Ա դդ. վերաբերող շերտի ութ սենյակների հյուսիսային հատվածի որմերի ստորին շարքի քարերն են միայն պահպանվել: Արեւմտյան կողմից առաջին սենյակը խորացվել է 60սմ: Այստեղ «Գանձարանին» զուգահեռ պատի բարձրությունը 4,50մ է (աղ. II,$_{7}$, a,b): Հայտնաբերվել են կղմինդրների եւ մ.թ.ա. Բ-Ա դդ. խեցեղենի բեկորներ:

Երկրորդ սենյակում, որն ավելի մեծ է (լայն. 9,50մ, պատերի լայնությունը 1,70մ) հայտնաբերվել է կրաքարե երկու խարիսխ (in situ), որոնց տորուսները (բարձր. 19սմ) հենվել են քառանկյուն (53x57սմ) սալաքարի վրա (բարձր. 24սմ) եւ վերին մասում ունեն նեղ դարակներ (տր. 24սմ, աղ. III, $_{9,15}$):

Խարիսխները հյուսիսային լայն պատից հեռու են 3,70մ: Խարիսխների հեռավորությունը կենտրոնից կենտրոն 3,30մ է, արեւելյան պատից մինչեւ խարիսխը 185սմ, արեւմտյան պատից 460սմ: Նախորդ տարիներին (2004-2005թթ.) տաճարական հելլենիստական հարթակի դիմաց բացված միջնադարյան պատերի մեջ հայտնաբերվել էին հար եւ նման երկու այդպիսի խարիսխներ (աղ.IV,$_{15}$): Այժմ պարզ է դառնում, թե որտեղից են դրանք առնվել: Այս սենյակը, հնարավոր է, որ եռանավ սյունազարդ դահլիճ է: Սյունազարդ սրահի արեւմտյան հատվածից հայտնաբերվել են բազմերանգ որմնանկարների, տարբեր հաստության

կղմինդրների բեկորներ: Ի դեպ, դրանք կարմիր կավից են պատրաստված, որն առաջին անգամ է հանդիպում: Գտնվել են նաեւ առաջին դարի սկուտեղների, պնակների բեկորներ: Բոլորն էլ կարմիր անգոբով պատած խնամքով փայլեցված նմուշներ են: Մեծ սկուտեղի բեկորներից մեկի պսակի, իրանին միանալու մասում, ներսից թուխ գոտի է արված, որը եզակի է այդ շրջանի նման խեցեղենի հավաքածուներում: 2,50սմ խորությունից գտնվել է ապակյա սրվակի մի բեկոր (Բ դ.): Հայտնաբերվել է կաղապարի մեջ կրաշաղախից ձուլված, կանելյուրներով փոքր կիսաբոլոր գլանի երկրորդ հատվածը (աղ. IV, $_{17}$): 2009թ. փաճարի հրապարակից հայտնաբերվել էին կրաշաղախից, կաղապարի մեջ ձուլած, շեղանկյուններով ու օվնաներով հարդարված կիսաբոլոր մաս[2], վերնամասում մեստաղյա ձողի օգնությամբ պատին ագուցելու փոքր փոսիկով (բարձր. 23,35սմ, տրամ. 14,44սմ): Տարածքից՝ հողի լիցքից ի հայտ է եկել նաեւ կրաքարե խարսխի փոքր բեկոր, որը դժվար է ասել թե ինչ տիպի է: Վերոհիշյալ մանրամասները խորանների ճարտարապետական ձեւավորման մասեր են եղել: Բազմիցս փոքր խարիսխներ են հայտնաբերվել Բակտրիայից, Այ-Խանումում,[3] Ուզբեկստանից,[4] եւ Այրտամում, Քյոլ Թեփեում, Թերմեզում[5] եւ այլ հնավայրերում:

IV-VIII սենյակներից գտնվել են կրաքարե սպիտակ եւ մուգ կապույտ երանգի սմալտայով պատած մեծ քանակությամբ խճանկարի հատիկներ, կիսաֆաբրիկատներ եւ հատակի խճանկարներով առանձին ոչ մեծ հատվածներ: Խճանկարների հատիկները պատրաստվել են տեղում: Այս տեղամասում աշխատանքները անձրեւների պատճառով ընդհատվել են:

Բաղնիքի հարավարեւելյան կողմում, 6մ հեռավորությամբ, բացվել է մոնումենտալ նոր կառույց՝ հյուսիսային պատի ճակատի մի մասը (երկ. 12մ) եւ արեւմտյանի մի հատված (երկ. 160սմ, պատերի բարձր. 160-180սմ, (աղ. III, $_{11,12}$): Հյուսիսային պատի վրա պահպանվել են, կիսաշրջանաձեւ անցքով (տրամ. 80սմ) երկու հնոցներ: Արեւմտյան անկյունից 4մ հեռավորությամբ, 4սմ հաստությամբ թրծած աղյուսով (40x40սմ), կառուցված կիսաշրջանաձեւ կամար ունեցող առաջին հնոցն է (աղ. III, $_{14}$), որից 840սմ հեռավորությամբ՝ երկրորդն է: Վերջինիս դիմաց բացվել է հնոցարանը (кочегарная):

Արեւմտյան հնոցի արեւմտյան կողմում հայտնաբերվել է թրծած աղյուսներով շինած առվակ (լայն 30սմ, խոր. 30-35սմ), որն ունի հյուսիս-հարավ թեքություն (2մ հատվածում տարբերությունը 20սմ): Այն մտել է կառույցի տակ, սվաղված է անջրաթափանց շաղախով, ծածկված է աղյուսներով, քարե սալերով (աղ. III, $_{10}$): Առվի արեւմտյան կողմում բացվել է ուղղահայց կանգնած մի կրաքար (լայն. 42x60սմ), որը կենտրոնում գլանաձեւ անցք ունի (տրամ. 16սմ): Այս քարի հյուսիսային կողմում գոգավոր խորությունով (տրամ. 43սմ) լվացարանն է (աղ. III, $_{13}$): Կենտրոնում ջուրը դատարկելու անցքն է (տրամ. 7սմ), վերջինս փակվել է շրջանաձեւ կրաքարե խցանով: Կողքին բացված կրաքարե քառանկյուն, եզրին ելուստով սալը, եղել է լվացարանի հենակներից մեկը:

---

2 Անդ, էջ 30, աղ. II, 11:

3 Տե՛ս **P. Bernard.** Quetriéme campagne de fouilles Ai-Khanoum (Bactriane), Comptes redus de l'Académie des Belles-Letres, 1969, էջ 337, հտ., Fig. 29,30:

4 Տե՛ս **Г. А. Пугаченкова.** Новые данные о художественной культуре Бактрии. Из истории античной культуры Узбекистана:

5 Տե՛ս **А. Пугаченкова.** Фрагменты эллинистической архитектуры паробережного Тохаристана. Термезская археологическая экспедиция, т. II, Труды АН УзССР, сер. I, История археологии, Ташкент, 1945, էջ 78, նկ. 12:

Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10

Նկ. 11

Նկ. 12

Նկ. 13

Նկ. 14

Նկ. 15

Նկ. 16

Նկ. 17

Նկ. 18

Նկ. 19a

Նկ. 19b

Նկ. 20a

Նկ. 20b

Հասարակական բաղնիքի հանդերձարանի (V սենյակ, 7,7x3,7մ), արտաքին մուտքի բացվածքը հարավային կողմում է (աղ. IV, $_{18}$): Արևմտյան պատին բացվել է չորս փոքր լուսամուտ՝ լայն. 12սմ, բարձր. 21սմ, երկուսը խորշերի մեջ (աղ. IV, $_{16}$): Ներքուստ հարավային պատին պահպանված առաջին սվաղի վրա, խազելու եղանակով (итал. graffiti)[6] նկարազարդել են: Նկարներն սկսվում են հատակից 25սմ բարձրությունից (աղ. V,$_{23,24}$): Դրանք ծաղկել են ինչ-որ սուր ակներևաբար երկաթե գործիքով: Երկրորդ սվաղի ժամանակ, առաջին սվաղի մակերեսին, մուրճի ծայրով հարվածելու եղանակով փոսիկներ են արվել, նոր սվաղը կպչելու համար: Այդ պատճառով շատ պատկերներ խաթարվել են: Մուտքի աջակողմյան (արևմտյան) պատի պանելոյի պահպանված մակերեսի (աղ. VI) բարձր. 130սմ, լայն. 106սմ է, իսկ որմնամույթինը՝ բարձր. 165սմ, լայ. 91սմ է (աղ. VII): Մուտքի արևելյան պատին պահպանված է մի փոքր հատված (աղ. VIII, բարձր. 60սմ, լայն. 50սմ):

Մուտքի բացվածքի ձախ կողմում պահպանվել են իրարահաջորդ երեք աղեղներ, եւ դրանց ներքեւում՝ չորս երկշար քառակուսիներով ցանց (աղ. VIII): Նեպրաձիգները չեն նշմարվում:

Ժողովրդական ստեղծագործության այս եղանակը (գրաֆիտ) վաղուց էր ծանոթ հին աշխարհին: Մեծ քանակությամբ գրաֆիտ է հայտնաբերվել հունահռոմեական հուշարձաններից, Պոմպեյում եւ Հերկուլանումում[7], հյուսիս-մերձսեւծովյան հունական քաղաքներում[8], սկյութական Նեռպոլում[9] եւ այլուր:

Հայկական լեռնաշխարհում գրաֆիտն սկսել է կիրառվել V-IV հազարամյակից (ժայռապատկերներ եւ այլն), եւ հարատեւել է մինչեւ մեր օրերը: Հելլենիստական եւ ուշ անտիկ շրջանում այն ավելի լայնորեն է օգտագործվել:

Հունարեն արձանագրություններ են գտնվել Արմավիրից (մ.թ.ա. Բ դ.), Գառնիից (մ.թ. Ա դ.), Ապարանից (մ.թ. Գ դ.), Տիգրանակերտից (մ.թ. Դ դ.) եւ այլ հնավայրերից: Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններից մեզ են հասել Արտաշես Առաջինի թողած արամեերեն արձանագրություններով սահմանաքարեր (մ.թ.ա. IIդ.), Արտաշատի VIII բլրի բնակարանների պատերի սվաղների մակերեսին բառեր ի հայտ են եկել խազելու միջոցով գրված հունարեն, լատիներեն, արամեերեն առանձին (մ.թ. Ա-Բ դդ.): Նման եղանակով արտաքուստ արձանագրություն է թողնվել Արտաշատի լազուրիտե ափսեի, Սիսիանի արծաթե սկահակի պսակների ներքեւում: Արմավիրում, Արտաշատում եւ Գառնիում հայտնաբերված մ.թ.ա. Ա մ.թ.Ա դարերի խեցեղեն անոթների եւ կավե արձանիկների մակերեսին գրված են հունարեն եւ լատիներեն բառեր եւ գրեր:

Հասարակական բաղնիքի հանդերձարանի պատկերաշարում, մուտքի ձախակողմյան պանելոյում նկարված են կանգնած եւ հեծյալ տղամարդիկ: Պատկերները բազմապլան են:

---

6 Ազատ, անկաշկանդ խազել կամ փորագրել պատերին, ժայռերին, միջազգային հաղորդակցության վայրերում, անոթների եւ խեցեղեն բեկորների վրա, որոնք պարունակում են տարբեր տեղեկություններ մասնավոր կյանքի, առօրյայի, տնտեսության ու քաղաքականության մասին, կարող են լինել Ատծուն նվիրված հմայական, մոգական կամ անհասկանալի բառեր եւ այլն: "Словарь Античности", М., 1989, с.156.

7 Անդ:

8 Տե՛ս **И. И. Толстой,** Греческие граффити древних городов Северного Причерноморя, М.-Л., 1959:

9 Տե՛ս **О. Д. Дашевская,** Граффити на стенах здания в Неополе Скифском. “Советская Археология”, 1962, թ. 1, էջ 176-194:

Պահպանվածության վիճակը հաճախ դժվարացնում է ճիշտ ընկալել նկարը: Դրանք արված են ազատ, անկաշկանդ ոճով, տարբեր մարդկանց կողմից: Խախտված են չափերն ու համաչափությունները: Մի դեպքում մեծ են, մյուս դեպքում բավականին փոքր: Երբեմն անփույթ են կատարված, նկարն անավարտ է (թերևս չի պահպանվել), կամ մանրամասները չեն գրված: Երբեմն էլ շատ արտահայտիչ են, ներկայացված, համեմատաբար մանրամասն:

Մարդիկ պատկերված են դիմահայաց (ֆաս) լայն բացած ոտքերով (աղ. $V_{,26}$, $VI_{,9,13,14,17,18}$): Իրանը նեղ մեջքից դեպի ուսերը եւ կոնքից ներքեւ եռանկյունաձեւ լայնանում է: Խիտոնը հասնում է մինչեւ ծնկները: Ոտքերը գրկած վարտիքը (տաբատ) իջնում է մինչեւ ոտնաթաթը: Խիտոնը եւ տաբատը հարդարված են շեղանկյուններով (աղ. $VI_{,9}$): Նույն զարդարանքը նկատելի է նաեւ թ. 14 նկարի տղամարդու տարազի պատկերում: Այդպիսի զարդերով տաբատներ են հայտնի Ամուդարիայի գանձի առարկաների պատկերներում[10]:

Թ-իվ 9 եւ 13 նկարի մարդկանց կոշիկները՝ պահպանված կապերից կարելի է ենթադրել, որ կաշվե տրեխներ են: Բոլոր տղամարդկանց մեջքի գոտուց սրեր են կախված (աջից-ձախ), ձախ ձեռքը կոթառին պահած:

Հետաքրքիր է կանգնած մարդկանց գլուխների հարդարանքը, որոնք մեծ բազմազանություն են դրսեւորում: Մի մարդու գլուխ կա պահպանված, բարձր կոնաձեւ գդակով, որի կենտրոնով ուղղահայաց գիծ է գնում: Մարդկանց փարթամ գիսակները հավաքված են գլխավերեւում: Ունեն ուղիղ եւ թեք սանրվածք: Մազերը, երբեմն արված են կետերով (խոպոպներո՞վ):

Ի դեպ Ծոշի (Սուզայի) պատկերներից մեկում, գահին նստած Արտաբան V-ը, իշխանության խորհրդանիշ օղը երկարել է Ծոշի Սատրապ Կվասակին (մ.թ. 215 թ.), որի գլխի հարդարանքը նման կետերով է գրված[11]: Արտաշատ հնավայրից հայտնի մարդկանց փարթամ մազերի համեմատ, դեմքերը շատ փոքր են (աղ. $VI_{,13,14,16,17}$, $VII_{,3,14}$): Դուրա-Եւրոպոսից գտնված բարձրաքանդակի պարթեւական աստուծո տարազի խիտոնի բացվածքից երեւացող շեղանկյունաձեւ զարդերով պատմուճանը եւ մազերի սանրվածքը նույնպես աղերսվում են Արտաշատի գրաֆիտ պատկերների հետ[12]: Իրենց լայն բացած ոտքերով, եռանկյունաձեւ ներքնամասով, ուշագրավ են Սուրխ-Կոտալի տղամարդկանց արձանները (մ. թ. Բ դ.), որոնց ուռուցիկ վարտիքը ոտնաթաթի մոտ կոճկված[13] է, տարբերվում են Արտաշատի գրաֆիտի տղամարդկանց տաբատներից:

Հաթրայում հայտնաբերված արքայի քանդակում (մ.թ.ա. Բ դ., պահվում է Մոսուլի թանգարանում), շքեղ խիտոնի բացվածքից երեւացող կարճ պատմուճանը հարդարված է

10 **М. В. Горелик.** К этнической идентификации персонажей, изображонных на предметах Амударьинского клада. "Художественные памятники и проблемы культуры Востока". Сб статей. "Искусство", Ленинградское отделение: 1985, с.36-45.таб.IV, 2, V, 4.

11 **Roman Ghirshman.** Iran Parthians and Sassanians. Translated by Stuart Gilbert and Fames Emmons. Thames and Hudson. 1962, fig. 70 (պահվում է Թեհրանի թանգարանում): **Даниель Шлюмберже.** Эллинизированный Восток. М., 1985, рис.131.

12 **М. И. Ростовцев.** Караванные города. Под редакцией К.А.Аветисян. Санкт-Петербург. 2010, рис.XXXI (պահվում է Լուվրում, Փարիզ):

13 Տե՛ս **Даниель Шлюмберже.** անդ, էջ 63-65, նկ.56:

Նկ. 21

Նկ. 22

Նկ. 23

Նկ. 24

Նկ. 25



Նկ. 26

Նկ. 27

Նկ.19
Նկ.14
Նկ.13
Նկ.21
Նկ.15
Նկ.17
Նկ.11
Նկ.8
Նկ.9
Նկ.12
Նկ.16
Նկ.10
Նկ.18
Նկ.7
Նկ.6
Նկ.4
Նկ.3
Նկ.5
Նկ.20
Նկ.2
Նկ.1

շեղանկյունաձեւ զարդերով. լայն փաբատն ունի մինչեւ ոտնաթաթն իջնող հորիզոնական ծալքեր, կոշիկը փափուկ կաշվից է[14]: Աշուրից գտնված, զոհասեղանի մոտ կանգնած, զոհաբերություն կատարող քրմի ճակատային պատկերի բարակ մեջքից դեպի ուսերը եւ մինչեւ ծնկները իջնող եռանկյունաձեւ լայնացող փարազը եւ գլխի հարդարանքը նման են Արտաշատի պատկերներին. իսկ փաբատը փարբերվում է[15]: Նման լայն, սակայն ուղղահայաց ծալքերով փաբատ ունի Բիսութունի ժայռին, զոհասեղանի կողքին, ճակատային դիրքով պատկերված, զոհաբերություն կատարող պարթեւ թագաժառանգը (Ա-Բ դդ.)[16]:

Գրավոր աղբյուրները հայկական փարազին դառնալով, նշում են, որ այն երկար, մինչեւ ոտնաթաթը հասնող, կրծքի ներքեւի մասով գոտեւորվող պատմուճան է[17]: Երկար եւ կարճ փարազ հին արեւելքում վաղուց էր հայտնի[18]: Երկար ու կարճ հագուստ ենք տեսնում նաեւ ուրարտական փարազում: Էրեբունիի Խալդիի տաճարի որմնանկարներում ոգիները երկար բաճկոններով են[19]:

Երկար մինչեւ կրունկները հասնող թիկնոցները եւ մինչեւ ծնկները իջնող շապիկները կային նաեւ Աքեմենյան շրջանում[20], տարբեր ժողովուրդների փարազում[21]: Պերսեպոլիսի հարկատու ժողովուրդների քանդակում. ընդորմ արմենները ներկայացված են մինչեւ ծնկները հասնող պատմուճանով եւ կրունկներին հասնող նեղ փաբատով[22]: Տվյալ դեպքում մեզ համար կարեւոր է Էրեբունիից հայտնաբերված արծաթե հեծյալով (протома) եղջերագավաթը (մ.թ.ա. Դ- դարի առաջին կես)[23]: Հեծյալի մինչեւ ծնկները հասնող շքեղ խիտոնը եւ

14 Տե՛ս **Roman Ghirshman.** անդ, նկ. 100:

15 Տե՛ս անդ, նկ. 60:

16 Տե՛ս անդ, նկ. 66: **Г. А. Кошеленко.** Культура Парфии, М., 1966, էջ 39:

17 **Страбон**, География в 17 книгах, XI, III, 3, XI, XIV, 9, (пер.и коментарии Г.А.Стратановского), Л., 1964, **Корнелий Тацит**.Сочинения в двух томах, том I, Анналы.Изд.подготовили А.С.Бобович, Я.М.Боровский, М.Е.Сергеенко.Л., 1969, XIII, 34.**Лукиан из Самосаты.** Избранная проза, М., 1991, стр.237, Александр, или лжепророк, 27, (пер.Д.Сергеевского).

18 История древного востока.Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации".Часть II, М., 1988, рис.16, 17, 39, 40, 91в, 98а, б, в.**В. Г. Ардзинба.** Ритуалы и мифы древной Анатомии, М., 1982, рис.5-7, 10.

19 **Ս. Ա. Եսայան, Ս. Գ. Մնացականյան,** Ուրարտական զգեստը, 1980, թ. 3, էջ 206, աղ. I, II, 2,3,5, էջ 206, 208, III, 2,4,6 եւ այլուր. **Б. Б. Пиотровский.** Исскуство Урарту VIII-VIвв.до н.э., Л., 1962, рис.7, 8, 10, 44, 46-50.

20 Antike Genmen in Deutschen Sammlungen. Band I. Staatliche Münzsammlung München-Prestel-Verlag, München, 1968. Fig. 251, 276, 279, 281, 294, բոլորն էլ մ.թ.ա. Ե դ., **Н. М. Никулина,** К. вопросу о "Восточногреческом" и "греко-персидском" исскустве (по материалам глиптики V-IV вв.до н.э.). ВДИ, 1969, № 3, стр.106-120, табл.I, 27, II, 6, 7, 9, III, 3.

21 **М. В. Горелик,** ñ. 36-46, табл.I-VI.

22 **Erich F. Schmidt,** Persepolis I, Chicago. Illinois, pl. 29B, № 3 (The Armenians(?)).

23 **Хачатрян Жорес, Маргарян Асмик.** Эребунийский ритон со всадником. «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2002, թ. 3, էջ 3-12, նկ. 1,2. **Ж. Хачатрян, А. Маргарян.** Ритон с протомой в виде всадника. ВДИ. М., 2003, № 4, с. 114-122, рис. 1,2; **Žores Hačatrian, A.Z. Markarian.** I Rhytadi Erebuni nel contesto dell' arte, Achemende e Greco-Persiana.Parthica, Incontri di culture nel mondo antico. Pisa. Roma. 2003, № 5, p.9-20, Fig. 1, 2. Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի "Портрет Оронта и вопрос "контактного стиля". ՊԲՀ, 2010, թ. 2, էջ 202-222, հոդվածում արտահայտված նրա տեսակետները մեզ ընդունելի չեն, բայց քանի որ դրա վերաբերյալ հատուկ աշխատանք է պատրաստվում, ուզում ենք նշել միայն, որ մեր (Jourès Khatcatrian. L'Arménie sous le règne des Orontides (VIe-IIIe-av.j.-c.). Au Pied du mont Ararat Splendeurs de l'Arménie Antique. 2007, Editions du Musée de l'Arles de la provence antiques, 2007, p. 151-157) հոդվածում պտյակի (ռիտոն) մասին ոչ մի խոսք չկա, եւ նույնիսկ ռիտոնին վերաբերող բացատրության մեջ վերոհիշյալ հոդվածներն անգամ չեն հիշատակված: Մենք կատալոգի կազմմանը չենք մասնակցել: Կատալոգ կազմողներն այն վերցրել են Բ. Ն. Առաքելյանի Клад серебряных изделий из Эребуни. Советская

մինչեւ կրունկն իջնող անդրավարտիքը հարդարված է Արտաշատի գրաֆիտի տղամարդկանց տաբատի նման շեղանկյունաձեւ զարդերով (աղ. IV,$_{20a,b}$): Երկար թիկնոցները, մինչեւ ծնկներն հասնող շապիկները եւ նեղ տաբատներն աղերսվում են Արտաշատից եւ Հայաստանի այլ վայրերից հայտնաբերված կանգնած եւ հեծյալ Միհրին եւ զինվորին պատկերող կավե արձանիկների տարազի հետ (I-II դդ.)[24]:

Այսպիսով, հայկական հելլենիստական եւ ուշ անտիկ դարաշրջանի տարազի համադրումը հարեւան երկրների, մասնավորապես իրանական՝ աքեմենյան եւ պարթեւական տարազների հետ պարզում է, որ թեեւ առկա են ընդհանրություններ, սակայն կան նաեւ տարբերություններ[25]: Նմանությունները բացատրելի են: Հայաստանը երկար ժամանակ մտնում էր Աքեմենյան տերության կազմի մեջ: Արտաշիսյան հարստության անկումից հետո, հայկական գահին բազմեց Պարթեւստանի թագավոր Վաղարշ I-ի (մ.թ. 51-75 թթ.) եղբայրը՝ Տրդատը (63-88 թթ.): Բնականաբար երկու հարեւան երկրների միջեւ եղած սերտ կապերը չէին կարող չազդել հայերի, առաջին հերթին վերնախավի վրա: Այդ առթիվ Տակիտոսն ասում է, որ «հայերը տեղադրությամբ եւ բարքերի նմանությամբ պարթեւներին ավելի մոտ էին կանգնած եւ խառնված էին նրանց հետ ամուսնություններով»[26]: Ըստ Ստրաբոնի[27] եւ Լուկիանոսի[28] հայերի զգեստը պատմուճանը հասնում էր մինչեւ կրունկը: Տաբատը նեղ էր, կապած ամբողջ ոտքին[29]: Ոտքին ոչ թե կիսակոշիկ է, այլ կապերից երեւում է, որ տրեխ է (աղ. V,$_{25}$):

Արտաշատի պեղումներով ի հայտ եկած մարդկային որոշ կերպարներից միայն գլուխն է պահպանվել, երբեմն էլ գլուխն ու երկար վիզը, իրանը շատ անկանոն եւ անփույթ է տրված, մինչեւ ոտքերը չի հասնում:

Արտաշատի գրաֆիտիում հեծյալները եւ առանձին նժույգները ներկայացված են ընդհանուր գծերով, սակայն դինամիկ, շարժման վիճակում: Հեծյալի իրանը եւ գլուխը տրված են ճակատային (ֆաս): Հաճախ բացակայում են հեծյալի գիսակները, երբեմն, նույնիսկ, դեմքի մանրամասները: Նժույգները պատկերված են պրոֆիլ, սլացիկ, քառատրոտի արշավի, թռիչքի դիրքով («flying gallop»[30], աղ. I,$_{1,4-8,18,21}$): Առջեւի եւ հետեւի ոտքերը խիստ ձգված են

Археология, М., 1971, № 1, 143-158, հոդվածից: Ըստ որում Առաքելյանը այն թվագրում է մ.թ.ա. Ե դ. (էջ 147), թե ինչո՞ւ է վերոհիշյալ կատալոգում այն թվագրվում մ.թ.ա. Զ-Ե դդ. տեղյակ չենք, եւ մենք մեր թվագրությունը (մ.թ.ա. Դ դ. առաջին կես) չենք փոխել:

24 **Ժորես Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի կոռոպլաստիկան, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, թ. 5, Տախտ. IV, 3-5. V, 1. VI, 1,3. **Նույնի** Об античной коропластике Армении. ВДИ, М., 1979, табл.IV 1,2.V, 1, рис.10,12.**Նույնի** , Արտաշատ, II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977թթ. պեղումները), «Հնագիտական պեղումները Հայաստանում», թ. 17, Եր., 1981, աղ. XXVI, 1-4, XXVII, 2, 5:

25 **Ն. Վարդան, Վ. Հացունի,** Պատմութիւն հին հայ զարազին, Վենետիկ, Ս. Ղազար, 1923, էջ 81, նկ. 35, 36, 38, 40: **Գ. Ա. Տիրացյան,** Դիտողություններ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազի մասին, ՀՍՍՀ ԳԱ, «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1959, թ. 11-12, էջ 97-101:

26 «Օտար աղբյուրները հայերի մասին, Լատինական աղբյուրներ», թ. 3, քաղեց եւ լատիներենից թարգմանեց Պ. Սուրենիկյան, Եր., 1941, էջ 73:

27 **Strabo,** XI, XIV, 12.

28 **Лукиан из Самосаты.** Избранная проза, Александр или лжепророк. 27 (перевод Д.Сергеевского).М., 1991.

29 **Жорес Хачатрян,** отражение Ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах.«Գիտական աշխատություններ», III, Գյումրի, 2000, էջ 37-45, աղ. I,$_{1-4}$, II,$_{1,3-5}$, III,$_{1-4}$, IV,$_{1-2}$:

30 Տե՛ս **Roman Ghirshman.** անդ, էջ 48-49, **А. П. Чубова, А. П. Иванова**, Античная живопись, “Искуство”, М., 1966, էջ 146:

Նկ.16
Նկ.3
Նկ.1
Նկ.4
Նկ.5
Նկ.6
Նկ.10
Նկ.11
Նկ.9
Նկ.8
Նկ.7

եւ գտնվում են գրեթե մի հորիզոնականի վրա[31]: Ուսքի նժույգների ազատ թողնված փարթամ ագին նույնպես, գրեթե հորիզոնական է: Իրենց հորինվածքով դրանք հար եւ նման են Արտաշատի Միհրին պատկերող հեծյալների կավե արձանիկներին: Այստեղ, նույնպես հեծյալները պատկերված են ճակատային (ֆաս), մի խմբում նժույգները «քառատրոփ արշավի» դիրքով են, որի վկայությունն է հեծյալի ծածանվող թիկնոցը[32], մյուս խմբում ձին կանգնած է կենաց ծառի կամ զոհասեղանի առաջ, ձախ ոտքը բարձրացրած, որը խորհրդանշական է եւ պաշտամունքային նշանակություն ունի (Ա-Բ դդ.)[33]:

Հեծյալներին ճակատային, ձիերին՝ պրոֆիլ, սլացիկ, քառատրոփ արշավի դիրքով պատկերելը բնորոշ էր պարթեւ հեծյալներին: Վերջիններս այդ ոճը ժառանգել են Աքեմենյաններից, եւ ապա այն անցել է Սասանյաններին[34]: Քննությունը ցույց է տալիս, որ պատկերելու այդ եղանակը տարածված է եղել պարթեւական մշակութային արեալի մեջ մտնող երկրներում, Հաթրայում, մասամբ Դուրա-Եւրոպոսում, Հայաստանում եւ այլուր[35]:

Արտաշատի գտածոներում ուշագրավ է լավ պահպանված առանձին պատկերված ձիերից մեկը: Հավանաբար հեծյալը չի պահպանվել: Այն մյուսներից տարբերվում է ավելի մանրամասն մշակումով: Նժույգը քառատրոփ վազքի վիճակում է: Գեղեցիկ հարդարված թամբի առջեւի եւ հետեւի մասում ուղղահայաց նեղ նկարներն են, հավանաբար կապարճներ: Հար եւ նման կապարճ առկա է Արտաշատից հայտնաբերված, նապաստակի որսի տեսարան պատկերող, հեծյալի կավե արձանիկի վրա[36]: Կապարճ է պատկերված նաեւ Դուրա-Եւրոպոսից գտնված վայրի ավանակների (onager, ցիռերի) որսի տեսարանում, հեծյալի թամբի հետեւում, սակայն այն տարբերությամբ, որ վերջինս շատ ավելի մանրամասն մշակում ունի: Տրված են ոչ միայն հեծյալի նետահարելու պատրաստված նետն ու աղեղը, այլեւ կապարճի միջի նետերը (մ.թ. Բ դ.)[37]:

Արտաշատի գրաֆիտում նժույգի բաշը ցանցաձեւ է: Նկատելի է սանձը, իսկ նժույգի գլխին շրջանակի մեջ վերցված ծառ (կենաց ծառ) է պատկերված: Դրանով շեշտված է նրա արքայական նժույգ լինելը: Նժույգի գլխի զարդը բնորոշ է Սասանյան ժամանակաշրջանին: Այն կարելի է տեսնել արքայական որսի տեսարանով արծաթյա թասերի վրա, հայտնվում է նաեւ Հաթրայի եւ Դուրա-Եւրոպոսի գրաֆիտներում: Պերսեպոլսի գրաֆիտում (մ.թ. Գ

31 Տե՛ս **Roman Ghirshman.** անդ, էջ 62:

32 **Ժորես Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի կոռոպլաստիկան, էջ 50, տախտ. IV, 1-4. V, 1. **Ж. Д. Хачатрян.** Об Античной коропластике Армении. 96-97, рис. 8,9, табл. IV, 1,2. **Ժ. Դ. Խաչատրյան,** Արտաշատ II, 1981, էջ 180, 181, աղ XXV, 1,4. Jaures Khachatrian. Arménie. Tresor de l'Arménie ancienne des origines au IVᵉ siecle. Paris, 1996, fig. 247,248.

33 **Ժորես Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի կոռոպլաստիկան, էջ 52, տախտ. VI, 3. Արտաշատ, II, XXVI, 2,3. Žores D. Khachatrian, Ai Piedi dell'Ararat. Artaxata e l'Arménia Ellenistico-Romana, a cura di Antonio Invernizzi. Torino, 1998, Fig. 94.

34 Roberta Venco Ricciardi Immagini Graffite dell'edificio a di Hatra. Partica. Jncontri di culture nel mondo antico. № 6, 2004, Pisa. Roma, p. 211. **К. В. Тревер, В. Г. Луконин.** Сасанидское серебро. Собрание Гос. Эрмитажа. Художественная культура Ирана III-VIII веков, М., 1987, стр. 54-81, рис. 14-28, 48-64; В.Г. Луконин, Иран в эпоху первых Сасанизов. Л., 1961, стр. 55-64, табл. XI-XXI.

35 **В. И. Пругло.** Терракотовые статуэтки всадников на Боспоре. "История и культура античного мира". М., 1977, стр. 178, кар. 1-4.

36 **Jaures Khachatrian**. Arménia, fig. 248.

37 Տե՛ս **Roman Ghirshman,** նկ. 62:

դ. սկիզբ) Սասանյանների արքայատան առաջին ներկայացուցիչներից Դապակը Արտաշիր I-ի որդին, երկար թիկնոցով լայն վարտիքով, կիսակլոր սաղավարտին, շրջանակի մեջ վերցված, ութ ճյուղանի ծառ է պատկերված[38]:

Արդ, ի՞նչեր են պատկերված Արտաշատի գրաֆիտներում. արդյոք դրանք թեմատիկորեն իրար հետ կապված հորինվածք են, թե՞ պարզապես տարբեր մարդկանց կողմից ազատ կատարված ժողովրդական ստեղծագործության արգասիք:

Հելլենիստական եւ ուշ անտիկ դարաշրջանում արքայական որսը շատ տարածված էր: Թագավորներն այդ նպատակով հատուկ անտառներ էին տնկում: Հիշենք Երվանդաշատի մոտ Արաքսի եւ Ախուրյանի միախառնման տեղում, ձախ ափին գտնվող «ծննդոց անտառը», Տիգրանակերտի մերձակայքի պալատն իր այգիներով, լճերով, գբոսանքի եւ որսի սիրահար թագավորի համար ժամանցի վայր էր, արքայական ամրոց Գառնիից մինչեւ Արտաշատ Ազատ գետի ափերին տնկված «Խոսրովի անտառը» եւ այլն: Բնականաբար արքային փառաբանող որսի տեսարանները չէին կարող արտահայտություն չգտնել պաշտոնական եւ ժողովրդական արվեստում: Որսում էին ինչպես վայրի գազաններ, այնպես էլ քարայծներ, եղնիկներ, վայրի ձիեր եւ ջորիներ (onagers, ցիռեր):

Հաթրայի[39] որսի տեսարաններում, առկա են առյուծներ, վարազներ, քարայծներ, եղնիկներ, իոյեր, ցուլեր, վայրի ջորիներ, քարայծերի սրընթաց վազքի վիճակում գտնվող մի ամբողջ երամակ եւ այլն: Պատկերված է ոչ միայն մարդկանց կողմից կատարվող որսը նետ-աղեղով, այլեւ ցուլի վրա հարձակված առյուծը: Դուրա-Եւրոպոսի Միհրի տաճարի որմին պատկերված որսի տեսարանում (Գ դ.), Միհրը նետահարում է փախչող առյուծին, վարազին, եղջերուներին եւ մյուս կենդանիներին[40]:

Վայրի էշերի վերոհիշյալ որսի գեղեցիկ տեսարանը, որտեղ հեծյալը սրընթաց վիճակում պատրաստվում է նետահարել երկու վայրի ցիռերի, նույնպես հայտնի է Դուրա-Եւրոպոսից (մ.թ. Բ դ., պահվում է Լուվրում)[41]:

Արտաշատի արշավող նժույգները հիմնականում պատկերված են դեպի աջ, կան նաեւ դեպի ձախ: Ձիերի մի մասի վրա հեծյալները բացահայտ են, դժվար է ասել դրանք նժույգներ են, թե՞ վայրի ջորիներ: Կանգնած մարդկանց բոլորի սրերը պատյաններում են, այսինքն այն պատերազմական տեսարան չէ: Մարդիկ կանգնած են այնպես, ասես շրջափակում են կենդանիներին: Առանձին պատկերներում հեծյալները նետահարելու դիրքով են, իսկ որոշ հեծյալների եւ կանգնած մարդկանց աջ թեւը շատ երկար է ներկայացված, ասես պարան են նետում դեպի նժույգը (աղ. VI,$_{12,16-18}$, VII,$_{3}$): Հանդերձարանի մուտքի բացվածքում մի շարքի վրա երեք գեղեցիկ աղեղ է նկարված, բայց նետահարողները չեն պահպանվել: Նկատվում է միայն նժույգի մի թամբ եւ առանձին գծեր (աղ. VIII):

---

38 **Н. К. Дибвойз.** Политическая история Парфии.Перевод с английского.Научная редакция и библиографическое приложение В.П.Никонорова.Санкт-Петербург, 2008, рис.68.

39 Տե՛ս **Roberta Venco Ricciardi**, անդ, էջ 206-217, նկ. 3-10:

40 **M. J. Rostovzeff.** Dura-Europos and its art. Oxford. 1939, Table XVIII. **К. В. Тревер**.Отражение в искусстве дуалистической концепции зороастризма.“Труды отдела Востока”.т.I, Л., 1939, Изд-во АН, Гос.Эрмитаж, с.244, табл.I. **А. П. Чубова, А. П. Иванова.** ñ. 146.

41 Տե՛ս **Roman Ghirshman**, անդ, նկ. 62:

Խնդրո առարկա մեր գրաֆիտում կողք-կողքի երկու փոքր կենդանիներ կան, որոնց ագին աղեղնաձեւ թեքված է դեպի վեր: Դրանք ակներեւաբար բարակներ են (աղ. VII,$_{1}$): Առկա է նաեւ եռանկյունաձեւ պատկեր, որը վրան է հիշեցնում (աղ. VI,$_{20}$): Նմանօրինակ երկու վրան առկա է Հաթրայի գրաֆիտում[42]:

Արտաշատի գրաֆիտում կարծում ենք, որ ներկայացված է վայրի նժույգների կամ ցիռերի որսի տեսարան: Քանի որ հասարակական բաղնիքը կառուցվել է մ.թ. Բ դարի վերջին Գ դարի սկզբին, եւ գրաֆիտն արված է առաջին սվաղի վրա, ուստի այն կարող է պատկանել Դ դարի առաջին կեսին, մինչ Շապուհ II-ի կողմից քաղաքի ավերումը (368 թ.):

42 Տե՛ս **Roberta Venco Ricciardi**, անդ, էջ 206, նկ. 3: